Արձանագրություն N 2

ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 10/17 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի Make-Up բաքի սնուցման խողովակի վրա կարգավորիչ փականի հանգույցի վերականգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի
Հայտերի բացման

ք. Երևան 13 հունիսի 2017թ. ժ. 14:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Գևորգյանը

Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Չիդեմյանը

Վ. Խաչատրյանը

Պ. Բոշնաղյանը

Լ. Օհանյանը

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանը

Գնումների պլանով նախատեսված գինը 3 000 000 ՀՀ դրամ

Նիստի օրակարգը

1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 10/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակիցների գրված տեղերի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի Make-Up բաքի սնուցման խողովակի վրա կարգավորիչ փականի հանգույցի վերականգման աշխատանքների:

Հարց 1. ԵՐՋԷԿ-ԳՀԱՇՁԲ 10/17 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ են ներկայացրել երկու կազմակերպություն՝

- «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ
- «Էներգանորոգգարանտ» ՍՊԸ

1.2. «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ն ներկայացրել է միայն հավելված թիվ 4-ը `գնային առաջարկ, մնացած հավելվածները չի ներկայացրել, այդ թվում տուժանքի մասին համաձայնությունը:

1.3. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 1 950 000 (մեկ միլիոն ինը հարյուր

հիսուն հազար) ՀՀ դրամ, հրավերը ներկայացնելու պահին հանդիսանում է ԱԱՀ չվճարող:

1.4. «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ-ն հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, տուժանքի մասին համաձայնությունը:

1.5. Հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ -ի գնային առաջարկը հետևյալն է՝ 2 830 800 (երկու միլիոն ութ հարյուր երեսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների գրված տեղի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Էներգանորոգզարանտ» ՓԲԸ -ին:

2.2. «Ռ.ԵՎ ՄԷԱ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, համաձայն ՀՀ Կառավարության 2017 թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետի մերժել, հայտի ապահովում չներկայացնելու պատճառով:

2.23Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Ծանուցել առաջին տեղ գրված մասնակիցին՝ հանձնաժողովի որոշման մասին:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ՀՇԳՑ թ1 էներգաբլոկի Make-Up բաքի սնուցման խողովակի վրա կարգավորիչ փականի հանգույցի վերականգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

1.1. ՀՀ ֆինանսների նախարարությունից հարցման պատասխան եզրակացությունը ստանալուց հետո այն տրամադրել գնահատող հանձնաժողովի անդամներին:

1.2. Հանձնաժողի անդամներից գնահատման թերթիկները ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում ամփոփել և հրավիրել գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ Ա. Գևորգյան

Անդամներ՝ Ս. Չիդեմյան

Վ. Խաչատրյան

Պ. Բոշնաղյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան